



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 20

ՃԱԲԱԹ

13 ՄԱՅԻՍ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ Զենիթը՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — Զենիթ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգէին արժանացած են:

Հատոր 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Տ. Ասաճորյան) شرکت مرتبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճաշսկսի Թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
վիանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կատարի լագործուածը ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՆԱԽԱԳԱՀԱՐԱՆ

ԲԵՐԱ

- (1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկեր խան , Թիւնէլի ետեւը .
- (2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ .

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիտ , Թրամվէյի կայարանին դէմ , թիւ 13 .

ՍԱԻԻՏԱՐ

Չարչը Պօյու , թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնահիւղեր գաւառներու բոլոր ֆաղաֆներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
343 կրկին , Տիւղուլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇԵՆՈՐ ՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

Դրամագրուի եւ Պահեսի գումար

31,008,000 ՅՐԱՆՔ

ՀՐԳԵՂԻ ՃԻԻՂ

Դրամագրուի եւ Պահեսի գումար

17,000,000 ՅՐԱՆՔ

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և
կարասիք :

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ :

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ :

Ընկերութեանս գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս , Ուլեանաք խան , թիւ 11—16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

ՊԼիսգոր Աերկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 20

ԾԱԲԱԹ

13 ՄԱՅԻՍ 1906

ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զէր արժեր անդրադառնալ Սուրհանդակի յարձակումներուն Պէրպէրեան վարժարանի դէմ, որովհետեւ այդ թերթը առաջին անգամը չէ որ այդ ոգիով կը շարժի մեր միակ երկրորդական կրթարանին հանդէպ, իր խելքովը կարծելով թէ կրնայ բարոյական փրկութիւն տալ մեր հասցնել, որովհետեւ ա՛յս կը թուի ըլլալ նպատակը :

Բայց բացարձակապէս տգեղ է ա. սիկա, տգե՛ղ, նախ՝ անոր համար որ Սուրհանդակ բնաւ պատճառ մը չունի վարկաբեկ ընելու աշխատիլ ամէնուն կողմէ սիրուած և գուրգուրանքի առարկայ եղած ա՛յդ վարժարանը, որուն սեմերէն դուրս եկող և հո՛ն իրենց դաստիարակութիւնը ստացող մարդոց առջեւ Սուրհանդակի խմբագիրները մեզի հետ մեծ պատկառանքով կը ներկայանան, ի՛նչ ընենին չեն գիտեր ա՛նոնց աչքը մտնելու համար, մանաւանդ

Սուրհանդակի խմբագիրներէն ոմանք : Այդքան մեծարուած մարդոց ուսումնական և բարոյական կրթութիւնը մատակարարող անձնաւորութեան մը մասին ա՛յսքան թեթեւ և անգիտակից վարմունք մը բարի հոգիի, ուղիղ տրամադրութիւններու նշան չէ բնաւ : Նոյն թերթը չէ՞ր միթէ որ անցեալներէն ալ Հիմնադիր-Տնօրէնին վրայ կանխահաս ծերութիւն մը նշմարելով, յորդոր կը կարգար, իբր թէ բարեմբտութեամբ, վարժարանին վարչութիւնը բարեխառնել, պատանեկացնել նոր տարրերով, բայց այսպիսի առաջարկութիւններ յայտնի է թէ նպատակ մը ունին միայն, աշակերտը և ծնողքները ուժացնել վարժարանէն, և յետոյ թերեւս Սուրհանդակ պիտի պարզէ թէ ո՞ր տեսակ կրթութիւնը լաւագոյն է մեզի համար :

Վարժարանի մը մէջ նոյն իսկ կրնան

պատահիլ բարոյականի հակառակ դէպքեր, Սուրհանդակի մարդիկը չատ միա-
միտ և գերազնիւ ըլլալու են եղեր ե-
րեւակայելու չափ որ գայթակղութիւն
մը իսկ բնաւ չպատահի: Թերթերու
խմբագրատանց մէջ անգամ, ուր մէկ
քանի հոգիով ամէն գործ կը լմնայ,
համերաշխութիւնը չէ որ միշտ կը փայ-
լի: Զանազան հանգամանքներով և
զանազան պայմաններու մէջ ներկայա-
ցող աշակերտներու և պաշտօնեաներու
ստուար թիւ մը մէկէ աւելի անպատե-
հութիւններ կրնայ յառաջ բերել, բայց
երբ վարիչին աչքը արթուն է և կամ-
քը զօրաւոր, գայթակղալից ամէն ա-
րարք իսկոյն արմատէն կը կտրէ կը
նետէ, առանց խորհուրդ հարցնելու
Սուրհանդակի, որ երբեք ու երբեք Պէր-
պէրեան վարժարանին ներքին կարգա-
պահութեան խառնուելու իրաւունք
չունի: Սուրհանդակը չէ՞ր որ Գատը-գիւ-
ղի Մխիթարեանց վարժարանին դէմ
ալ բաներ մը ըսելէ վերջ — որովհե-
տեւ մտից տոմսակ չէր զրկուած իրեն —
պարտաւորեցաւ քանի մը օր վերջ բա-
ցարձակ հերքումը տալ իր ըսածին:
Սուրհանդակը չէ՞ր որ մեր բարձր դա-
սու ընտանիքներու պատիւը ազարտելէ
վերջ, տակաւին մեկանը չչորցած պար-
տաւորեց ինքզինքը հերքել իր ըսած-
ները: Ասանկ տարօրինակ խաղալիկնե-
րով չէ որ Սուրհանդակ պիտի համար-
ձակի անուանարկել վարժարան մը, որ
Բարեխնամ Պետութեան բարձր պաշտ-
պանութիւնը կը վայելէ, պարկեշտ քա-
ղաքացիներ, անբասիր շրջանաւարտ-
ներ հասցնելով, որոնք յարգ կը վա-
յելեն թէ՛ Պետութեան և թէ՛ մեր հա-
մայնքին բոլոր շրջանակներուն մէջ:

Այս պատճառաւ ահա կ'ըսենք թէ
Սուրհանդակի ըրածը յոյժ տգեղ է, և

իբր թէ գայթակղութիւն մը ձաղկելու
խուլ և նպատակաւոր մարմաջէն մըղ-
ուած՝ ինք իր կարգին կ'իյնայ գայթակ-
ղութեան մը մէջ, որուն արատը դիւ-
րաւ չի սրբուիր:

Պէրպէրեան էֆ. ա'յնքան մօտէն կը
հսկէ իր խնամքին յանձնուած աշա-
կերտներուն և պաշտօնեաներուն վրայ,
որ ամենափոքր չանցառութիւն մը իսկ
վայրկենաբար կը դարմանուի կը պատ-
ժուի, և ասիկա բարոյական ամենէն
մեծ դասն է, զոր վարիչ մը կրնայ տալ
իր աշակերտներուն, թողունք ա'յն
անթիւ անհամար դասերը, զորս Պէր-
պէրեան էֆ. դեռ կրնայ տալ Սուրհան-
դակի խմբագիրներուն Բարույն, ճըշ-
մարտին և Գեղեցկին մասին, քանի որ
աննենգ է իր սիրտը և հաւատք ունի
Բարութեան, ճշմարտութեան և Գե-
ղեցկութեան վրայ, որոնցմէ ա'յնքան
արագ կը հեռանայ կը գանի Սուրհան-
դակ, տարապայման անուանարկութեան
մը տգեղութեան անձնատուր ըլլալով:
Բայց Պէրպէրեան վարժարանին ֆլա-
սելու այս միջոցն ալ դատապարտուած
է անհետեւանք մնալու, թողլով իր
ետեւէն Պէրպէրեան էֆ. ի Արհամար-
հանքը միայն:

Լ Ե Ի Ո Ն

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԿԱՐԴԱՅԷ՝ Ք

« ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ »

ՅԱԶՈՐԴ ԹԻԻԻՆ ՄԷՋ

Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ ԷՖԷՆՈՒԻ մէկ ինքնա-
տիպ յօդուածը:

ՔԱՀԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՐԿՈՒՆ

ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ

Խորին ցաւով կիմանանք մահը Յարութիւն աղա Թորգոմեանի՝ հայր, Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամ Տօքթ. Վահրամ էֆ. Թորգոմեանի և Հանրային Պարտքի վարչութեան և Կայս. Անձնական Գանձուն երկրագործական մասնագէտ Խորհրդական և Պրուսայի շերամաբուծական վարժարանին տնօրէն Վսեմ. Գէորգ էֆ. Թորգոմեանի :

Յարութիւն աղա թէեւ պարզ արուեստաւոր մը՝ սակայն գիտցած է խնամեալ դաստիարակութիւն մը տալ իր զաւակներուն, որոնք այսօր ընկերային բարձր շրջանակի մը վրայ կը գտնուին, պատիւ բերելով Հայ համայնքին :

Դաբաթ օր երբ հանգուցելոյն վիճակը ծանրացած էր, հեռագրով Պրուսայէն կանչուեցաւ Վսեմ. Գէորգ էֆ. Թորգոմեան, որ անմիջապէս Պոլիս հասնելով իր եղբօրը և քոյրերուն հետ առաւ ծերունի հօրը վերջին օրհնութիւնը :

Մեռելական արարողութիւնը՝ կատարուեցաւ Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ, ի ներկայութեան Վեհապետեան Տ. Մկրտիչ, Երէցեան Տ. Գէորգ և Վանքեան Տ. Արիստակէս եպիսկոպոսներու, բազմաթիւ վարդապետներու, քահանաներու ու դպիրներու :

Յուզարկաւորութեան ներկայ էին հայ և օտարազգի ականաւոր անձնաւորութիւններ, կառավարական պաշտօնատարներ, վաճառականներ, բը-

ժիշկներ, փաստաբաններ, գրագէտներ, ուսուցիչներ, Հանրային Պարտուց վարչութեան կողմէ պատգամաւորութիւն մը նոյն պաշտօնատան գալազներով, Սկիւտարի միացեալ եկեղեցիներու թաղ. Խորհուրդի անդամները, տեղւոյն աղքատաց և կարօտ ուսանողաց խնամակալութիւններու անդամները և ազգականներու ու համակրողներու հոծ բազմութիւն մը :

Եկեղեցական արարողութիւններէն վերջ դադարը խուռն բազմութեան մը ուղեկցութեամբ փոխադրուեցաւ Սկիւտարի Ազգ. գերեզմանատունը, ուր վերջին արարողութիւնները կատարուեցան և հանգուցելոյն մարմինը ամփոփուեցաւ Թորգոմեան բարեհամբաւ գերդաստանի յատուկ դամբարանին մէջ :

Ներկաները յետոյ իրեց ցաւակցութիւնները յայտնեցին Ազն. Տօքթ. Վահրամ և Վսեմ. Գէորգ Թորգոմեան էֆէնտիներու, ինչպէս նաև Կայսերական Բժշկական վարժարանին քիմիագիտութեան ուսուցիչ Ազն. Նշան էֆ. Ղուկասեանի, որ քեռորդին է հանգուցելոյն :

Խմբագրութիւնս այս տխուր առթիւ իր անկեղծ ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալ Յարութիւն աղա Թորգոմեանի յարգելի Որդւոց և քոյր պարագայից :

ՍԻՆԿԷՐԻ գեղարուեստական Կրդցուցահանդէսը բացուած է Բերայի ընդհ. Տնօրէնութեան սրահներուն մէջ, Պօն Մարշէի դիմաց : Յուցահանդէսը ամէն օր բաց է և մուտքը ազատ :

ՄԵԼԱՆԻ ԲԻԾԵՐ

Մայի՛ս, ամիս բուրմանց, ամիս բանաստեղծութեան, ամիս սիրահարութեան, ամիս վայելից . . . ինչպէս պիտի երգէր Նդիական վերացմամբ մեր գրասէր Ատոմը:

Մարմանդը զմրուխտ կը սփռէ մեր ոտքերուն տակ, երկինքը չափիւղայ ցոլքեր կը զանակէ մեր զլխուն վերեւ, թաւուտներուն մէջ կակաչ ու մեխակ եւ պատուհանէ պատուհան Զարեհ ու Նուարդ . . . քծնիք ու տարփանք կը հիւսեն:

Վերջապէս Մայիսը aux jeunes cœurs կը փթթեցնէ յուսաւտ տենչեր, աղուոր Վասիլիքի հոգիին մէջ պարիկներու մատներով նարստուած երազներ . . . որպէս զի ինքզինքը նետէ Ուրմախական յաղթական մըրտենիով պսակուած Ալպիօնի զաւկին աճառուտ բազուկներուն մէջ, Մէրէլի չրթունքին վրայ սիրատարի մրմունջներ . . . որպէս զի թովէ Կալէյն ու բաժնէ կնոջմէն ու զաւակներէն՝ նոր աշխարհի ափերուն վրայ սէր վայելելու համար, եւ Աննէթայի սրտին մէջ տարփանքի ծաղիկներ . . . որպէս զի անոնցմով պսակ մը կապէ Ասատուրեանի . . . երիտասարդ ճակտին:

Մայի՛ս, բնութեան այդ նորհարսը՝ մանաւանդ կը դարպասեն ծնրադիր բոլոր բանաստեղծները, որոնց վերջապէս անձնատուր՝ կապուտ-կողովուտ կը բաշխէ բոլոր իր շնորհները, իր հրապոյրները, անոնց՝ որոնց սիրտը ունի տրոփում մը բարիին, գեղեցկին ու խոնարհին:

« . . . Կինը ո՞չ միթէ փոփոխական բայց անսպառ էակ մըն է:

Այսպէս պիտի տայ Տ. Յակոբեանին jais աչքերուն հմայքը ու արծաթ հունչը ձայնին . . . գարնանաբեր գնչուհի մը « երազային համայն » խորագրով բանաստեղծութիւն մը քերթելու համար:

Տիկին Զարուհիի pâle վարդերու փունջ մը . . . եւ մանտօյնի ամենէն փափուկ հեծկըլտանքները, անոնցմով « une songe d'amour » արձակ քերթուած մը գրելու համար:

Արտաշէս Յարութիւնեանին բոլոր արշալուսային սլուրիլները եւ . . . գորտերու оркестре մը « կապոյտ sonnet » ներ շարադրելու համար:

Զապէլ Ասատուրին բոլոր վայրի էտլվայսերը, միօզօդիսները, նարնջածաղիկները . . . աղուոր աղջկան մը « chut d'un ange » ը գրելու համար:

Զօհրապին crepé մազերու տակ սքօղուած դէմքով կիսաշխարհիկ կնոջ մը պերճ մարմինը ներկայացնող . . . en miniature portraits գրելու համար « frison d'amour » վերնագրով՝ վիպակ մը:

Պէրպէրեանին Զամէայի սոխակներուն բոլոր մեղօտները « յուզումի սարսուռներ » poésie lyrique մը թիւրեղացնելու համար:

Փանոսեանին՝ բոլոր մրմունջները առուակին, խոտին, ճանճին . . . վերջապէս բոլոր ոստոստուն դաշնակութիւնները Հարտուի մէկ վերնագրով « rondelle » մը գրելու համար:

Մեծարենցին՝ բոլոր բոյրերը, բոլոր թոյրերը, տարտամ գիշերին լոյսերը, եւ ծովու լոգանքէ նոր ելած d'or moiré դէմքով հիւանդոտ սիրուհիի մը մէկ « romance » ը գրելու համար:

Պարսամեանին բոլոր էրկան Մարտիկի nouvelle saisonի բոլոր կերպաներու գոյն՝ թափանցիկ, ծիրաներփիկ ու լազուարթ ամպերու քուլաները, « l'esperance en avenir » վերնագրով քերթուած մը գրելու համար:

Նաեւ,

Գրիգոր Մալխասին թաղանդապատ չափաթ մարուկ մը . . . որով իր տաղանդին « monoton chanson » ը շարունակելու համար . . . ամենայն համբերութեամբ — թէ իրեն եւ թէ լսողաց —:

Թօլաեանին՝ չիֆթե նադարա մը . . . Սինանեանին « կալիօզ բօլբան » . . . պարելու համար:

Ալփիարին՝ ֆօնօլիւսֆ մը . . . որպէս զի քունին մէջ ալ՝ ականջին տակ կրկնէ պատասխանը — Մեծ բարերարին՝ Թաւաճեանին՝ որ արտասանած է այս պահուս . . . Ատլանտեանէն անդին:

Մէհտէրեանին՝ 1200 հոգիէ բաղկացեալ soprano խմբերգ մը, Եկմալեանի պատարագը անգամ մ'ալ . . . ձախերգելու համար:

Քէսէճեան Սմբատին տիւած « րնգատիկ » մը . . . Ունկնատեան բարեկամին ականջին լսելի ընելու համար soprano զիլ solo մը:

Այսքա՛ն գրական ու գեղարուեստական յառաջդիմութիւն: Salvé!

ՍԻՐՎԱՐԴ ՍԻՐՈՒՆԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՔ
ԱՐԱՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ի ԳԱՏԸ—ԳԻՒՂ

Տիպար ուսուցիչ կրօնի ուսման,
Դիւղին ֆարոգիջ վարդապետ Դուրեան
Դիւսեօզ սոսկար ըղայ շարունակ
Տըղոց որ կ'ապրին իր սուրբ աջոյն շակ:
Յիշեալ զբարոյսին ազնիւ զնօրեան
Նրան կփեկնին ձեռքնհասօրեան
Կը վարե երկար ասեմեք ի վեր
Իր տեսիլ պաշտօն ու կուսայ դասեր:
Տեւ-Անդրեասեան կփեկնին երուանդ
Բարձր անկասով՝ ուր կայ խեղճ, տաղանդ,
Յըրաններեան կ'աւանդէ դասեր
Նոյն ուսման մասին զըղոց տալով սեր:
Ձեքի կփեկնին, կարող տանկաքան,
— Որուն յոյս տեսաւ շրջեղ բառարան, —
Միշտ նոր մեքոսով ու դեմքով ժրպտան
Կ'աւանդէ զըղոց Պետական լեզուն:
Դեռ երեսասարդ, հըմուտ չարագէտ,
Նաեւ բընագէտ ու աշխարհագէտ,
Տիար Գըրիգոր մեր եփրանոսեան
Կազմե ու լուծե խընդիր անասնման:
M. Camille Benoit, — արդեօք կը ճանչնա՞ք, —
Ձոր շատ կը սիրեն զբարոյսի զըղաք,
Գաղղիացի կրթեալ ուսուցիչ մ'ազնիւ՝
Որ մերք սաներուն կուսայ առատ քիւ:
Մանօր նըկարիչ, Սիմոն կփեկնին,
Որ կուսայ հոգի, շունջ՝ անշունջ շաքին,
Արուեստագէտի դեմքով մը միշտ լուրջ՝
Օժտեալ սաները կը ժողովէ իր շուրջ:
Ուսուցիչներուն ուսուցիչն անմահ՝
Դրրի մաքրութեան յաւեք խըստապահ՝
Միհրան կփեկնի Տեօփեմեան բարի
Միշտ իր դասերուն խանդով կը բարի:
Ձայնաւորութեան հիմայ ալ յիշեմք
Ուսուցիչն՝ որ անձ մ'է պարկեշտ, աննեղ,
Տիար Սարգեան, որ անէն վայրկեան
Կը կարգայ Սաղմոս, Նարեկ, Շարական:
Այս տղան գրողն ալ նոյն զբարոյսին
Ուսուցիչներուն ամենեկն յեկն՝
Ձեռքն եկածին չափ կ'ընէ ճիգ, ջանք
Որ գուր չը սահին զըղոց ժամեր քանկ:
Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ՅԱՆՑԱՍՏԱՆ

Միւսին կը գըրէր ճիշտ տողեր հազար,
Մամիկն անդիէն զինքն հեգներ, հազար:
Պարկեշտ օրիորդ կը հիւսէր տանթէլ,
Մինչ սըրտէն քաշէր հեռագիր անթել:
Մակարոյժ գըրողն եղաւ խըստարան,
Թերութիւններուն յոռի փաստարան:
Հիւանդաց կուտան բըժիշկներ քաշէ,
Գըրչակին խեղճ ոճն ինչե՛ր կը քաշէ:
Խիթ ունեցողին կը պատրաստեն խիւս,
Անգոր ըմբիշներ յաւէ՛տ կ'ուտան խոյս:
Հըրարուղիները կը պոռթկան լաւան,
Աղտոտ գըրիշներն ալ միշտ կը լըւան:
Բարեսիրտ մարդիկ փախչին խըռովքէն,
Իսկ չարերը միշտ կ'ուզեն խըռովք, քէն:
Թէ կ'ուզես ըլլալ լաւագոյն մէկ մարդ,
Մըտնել մի բաղձար յանձան գըրամարտ:
Սիրուած անուն մը կը բաւէ կ'ըսեն,
Բայց նախանձոտներն է՛ր մուր կը քըսեն:
Գետերու ջուրերն միշտ վար կը վազեն,
Է՛ր կըրքոտ անձինք վար չ'են յովազէն:
Տըռփանքն աւերիչ ախտ մ'է ամէն տեղ,
Որուն չ'են կըրնար տալ դարման ու դեղ:
Վերջ մը տալ պէտք է այն սին սէրերուն,
Որպէս զի չ'երթանք կըքած մենք հեռո՛ւն:
Բարոյականով օրիորդ ու կին,
Միշտ մեզ կը թովեն խանդով մ'անմեկին:
Վաղանցիկ սէրերն տան հըրճուանք գըրչին,
Բայց անոնց վերջը ինչի՞ կը կառչին:
Շինծու պըջրանքներ, հաճոյքնէ՛ր սըրտին,
Ոյց վերջարանը պատրանք մ'է ցըրտին:
Պատանեաց սէրեր յանգին անուրջին,
Երբ անոնք հասնին կեանքի կամուրջին:
Երբ յոյսը չի գայ վըշտին ետեւէն,
Թախծութիւնները մինչեւ ե՛րբ տեսնեն:
Կոյր կ'ըլլան կ'ըսեն մարդիկ սիրերգակ,
Կը քողածածկո՛ւի, փայլուն արեգակ:

Միթէ մենք կըրնանք ամէն ինչ մոռնալ,
Մեր խոստումները՝ ներառ ու մօրն ալ:

Սիրատարի սըրտեր միշտ պաղատագին,
Հեծեն, բայց վերջ... կա՛յ այդ պաղատանքին:

Անճարակ մարդիկ ինչո՞ւ կը ճառեն,
Որք շատ հեռու են, բուն այդ կաճառէն:

Մի կարծէք. յանգերս թէ չուտով հատան,
Գըլուխ արդուկել չ'է, մերին մօտան:

ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԵՋԵՐԵԱՆ

ՇԱՐԱԹԸ Թէ ԿԻՐԱԿԻՆ

Օր նոր լուր նոր:

Շրա՛խխ, քեզի կ'ըսեմ կոր պէ՛, այս
ի՛նչ դժբաղդութիւն է որ գլխուս եկաւ, ամ-
բողջ օրը աշխատէ՛, յոգնէ՛, վազէ՛, օրա-
կան 10 ղրուշի համար, ու իրիկուններն ալ
եկուր տունդ, փոխանակ քիչ մը հանգիստի,
տառապէ՛, խուկա՛, այս ի՛նչ անհամ կեանք:

Շրա՛խխ... երկրորդական, երրորդա-
կան ապտակները կը շարունակուին արական
ջլապինդ բազուկներուն զօրութեամբ, իգա-
կան փափուկ! այտերուն վրայ, բարկու-
թեամբ կնոջ հասցէին ուղղելով իւր դժգո-
հանքները, մինչ կինը դարձեալ կը պնդէր,
կնոջական յատուկ յամառ բնաւորութեամբ,
չաբա՛թը, չաբա՛թը:

Գիշերուան խոր լուծեան մէջ, վայրա-
հաչ պոռչտութիւն արձագանգ տուած ըլլա-
լով ամբողջ թաղին մէջ, արդէն իսկ ստուար
բազմութիւն մը եկած խոնուած էր տան
դռան առաջը, ուրկէ դուրս կարճաքան-
գէր աղմկալից անլուր լուտանքներ:

Հետաքրքրութիւնս յագեցնելու համար
ի հեռուստ անկին մը կը կծկաիմ, դիտե-
լով այդ երկուսեւ բազմութիւնը: Ամենքն ալ
խորեւ զբօսանք հոն հաւաքուած էին: Կար-
ծես պարզապէս ժամանցի մը համար, մինչ
ներսը՝ խժդուժ տեսարաններ կը պարզուին
առն եւ կնոջ միջեւ:

Ապտակներու անվերջանալի շարքը, որ,
բարկութեան կոյր վիճակի մէջ փոխուած էին
այլ եւս կռուիի սանձարձակ հարուածներու,
օգնութեան աղաղակներ էին որ կը լսուէին

ընդմիջութեամբ կնոջական խոր ու նուազկոտ
ձայնէ մը:

Օգնութի՛ւն, օգնութի՛ւն:

Խոնուած բազմութիւնը՝ մէկ քանի կա-
րեկցութիւն ունեցող կիներու հրմշտուկնե-
րէն կը ճեղքուէր, որոնք դժուարաւ կը յա-
ջողին ներս մտնել, օգնութիւն մը հասցնե-
լու համար, կռուիներու հարուածներուն
տակ նուազած շաքաթապահ տիկինին! ,
խեղճը չը կրնալով դիմանալ կերած ծեծին
հիմա անկողին ինկած կը տառապի:

X

Ընտանեկան այս պարզունակ օճախը
տակն ու վրայ ընող պատճառին անդրա-
դառնալ պէտք է կարծեմ, ի յայտ բերելու
համար թէ ի՛նչ սնոտի պատճառներէ ծա-
գում կ'առնէ ստէպ ընտանեկան երջանկու-
թեան խանգարումը:

Մարդուն մէկը՝ ծննդով հայ բողոքական
եղեր է, եւ սակայն, յետոյ, բողոքակա-
նութենէն ալ չաբաթապահ եւ կամ չա-
բաթապաշտ եղեր է, համոզուելով թէ հոգեոյ
փրկութեան համար պէտք է շաբաթապաշտ
ըլլալ: Այսպէսով մեր մարդուկը սկսած է քա-
րոզել միշտ շաբաթը, հոս հոն, ուր որ վեր-
ջապէս հանդիպի իրեն:

Աղամին զաւակները միշտ անխախտ ի-
րենց հաւատքին վրայ կը մնան, կիրակիի
բուռն պաշտպան: Մինչ նորութեանց սիրա-
հար Եւայի թողնուհիներէն ոմանք կըլլան
չաբաթապահ: Այս բարեպաշտ շաբաթապա-
հուհիներ, անանկ մը կը փարին հոգեւոր
փրկութեան ճամբուն որ, ալ ամէն ինչ՝
տուն, գործ, այր ամուսին կը մոռնան ու
միայն ինքզինքնին կը նուիրեն շաբաթին:

Խրատ, աղերսանք, պաղատանք ամէն
ինչ անօգուտ: Ընտանեկան վէճեր, կագ,
կռիւ դարձեալ անօգուտ, վառն զի ալ հա-
մոզուած են թէ՛ արտաքոյ շաբաթի չիք
հոգեւոր փրկութիւն:

Իսկ ես ալ համոզուած եմ թէ բոլոր այս
տխուր եղելութեանց սկզբնապատճառը դաս-
տիարակութեան պակասութիւնն է, վասն-
զի զարգացեալ դասակարգը կը խնդայ մի-
այն չաբաթ ո՛ր այս ջերմ պաշտպաններուն
միամտութեանը վրայ:

Գ. Մ. ԱՐԱՆՆԱՄԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՓՈՐՁԱՆՔ

(Բանաստեղծաբար գրուած)

Առաւօտ մ'էր, բայց չի կարծուի այն սովորական առաւօտներէն՝ որոնք չունին ո եւ է բանաստեղծական հրապոյր, այլ Մայիս ամսոյ առաւօտներէն մին, որուն ամէն րոպէն, ամէն վայրկեանը ու ամէն երկվայրկեանը բանաստեղծական ինչ մը կազդէ բանաստեղծին, զի ինչպէս ծիծեռնիկները ու շէշկէները ամառը կուգան, այնպէս ալ մայիս ամսուն ամբողջ բանաստեղծներուն մուսաները կուգան, ու վայելելու համար մայիս ամսոյ արշալոյս մը հարկ կը համարիմ հարիւրին ութսուն զեղչ մը ընել իմ քունի դրամագլխէս, առաւօտեան ճիշտ ժամը Յին ելլելով անկողնէս, թողլով նօթի ու սովորուկ քիտէներու ու քահրապիթներու լճեղնները, որոնք բաւական տեսնէ ի վեր արդէն սկսած են իրենց գիշերային անխիղճ շահատակութեամբ, ըռալանի կեօլսես խռուսայիւ ընել վրան զանալա բանելով:

Կը բանամ պատուհանս, որ հայի ընդ արեւելս, ո՛հ, ինչ կը տեսնեմ ո՛վ բնութիւն, լոյսին կարապետը (կը խնդրուի Բագէն վարդապետը չի հասկնալ) արշալոյսը գծած է հորիզոնին վրայ լուսեղէն գիծ մը, որ միայն Այվազովսքիի վրձինը ու նագգաշ կարապետին ֆոնյան կարող է պատկերացնել, ու բանաստեղծ օրէն, իմ սրտիս խորէն, կը գոչեմ զգացմանց զօդէն, ո՛վ արշալոյս արշալոյս, քանի գեղեցիկ ես, որքան հեշտատեսիլ, որչափ սիրուն, ինչքան անուշիկ, ո՛վ արշալոյս, քեզմով կեանք կառնէ բնութիւնը, քեզմով կը զարթնուն ամենայն մարմինք երկնաւորաց եւ երկրաւորաց, բանաւորաց ու անբանից, խօսնոց ու անխօսից, շնչաւորաց եւ անշնչից, դու կըլլաս պատճառ որ կը պարզուի մեր աչաց առջեւ ամբողջ կանանց գեղեցկութիւնը, մարգագետնին դալարութիւնը, ծովուն անհունութիւնը, երկնքին կապոյտը, ծառոց գեղեցիկ տեսքը եւլն. եւլն. :

Ո՛վ արշալոյս արշալոյս, քեզմով է որ կը վայելենք սոխակին դալարայիւրը, ոչխարին մայելը, ճպուռին ճռճալը, էշուն զռալը, գորտերուն կռկռալը, բանաստեղծներուն

տոտաւը, առուակին կարկաչելը, շունին հաջելը, ձիուն խխնջելը, կանուխ ելլալով ու նեկազիլ ըլլալով՝ վայրկեանը մէյ մը քիթ խնջելը, կատուին մլաւելը, բանաստեղծին ծախաւելը (վրաս պարի) աքլորին կուկուրիկուկուն, միանուագ կուկուն, եւ ամբողջ երգն ու ձայնը ձայնաւոր արարածոց յ'արարչէն հաստեցելոց: Եւ ո՛վ արշալոյս արշալոյս, դու կը բերես լոյսը, կը փարատես սրտերու յոյզը, կը պարգեւես յոյսը, սիրելու կոյսը: Ո՛վ արշալոյս արշալոյս, ի քէն փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղն, վերանայ մութն, գնայ գիշերն եւլն. եւլն., դու կը բերես լոյսն ու բարին, ո՛վ արշալոյսդ Աստուծոյ բարին, ո՛վ արշալոյս արշալոյս:

X

Պէ՛ մարդ, չե՛ս ումէնար չե՛ս խախիր, պոյդ պօսրդ նայէ, թութաւնով պոյրխոյր նայէ, խառնադճի մազերդ նայէտէ, անկէ ետքը ել դուռ դրացինին աղջիկները գուլխէ հանէ, իմ Արշալոյս քուկին կիտցած աղջիկներէդ չէ, զավալը մախսըմբս տահա կը քննանայ կոր պիլէ, դուն իսէ զաննը կընես կոր քիմ քու վրադ կը թուքնէ տէ, ելեր ես չափախին, կիւյամ քիմ խօռքեզանութիւն պիտի ընես, մէկ ծան արշալոյս, արշալոյս կը կանչես, կիտցած ըլլաս էս անանկ քնացող հարերէն չեմ, մարդուն եախան ասանկ կը պոնեմ, սըվոր նայէ չամջցած չի խախած մարդ. . . : Այսպէս կը ճառախօսէր մարդ մը՝ որ պատիւ ունեցած էր մեզի դրացի ըլլալու, ու այնպէս կարծած էր թէ՛ իրեն Արշալոյս աղջկան հետ սիրաբանելու համար, կանուխ ելած եմ, եւ ինք իբր աչալուրջ հայր, օձիքս ձեռք առնելով սկսած էր իր հայուչներու եւ նախատալից խօսքերուն շարքը, որոնց ի լուր մուսաս կծիկը կը դնէ ու ես ամբողջ մարմնովս կը ցնցուիմ ու կսկսիմ ապուշ ապուշ դրացիիս երեսը նայիլ, որ իմ այս վիճակէս աւելի քաջալերեալ այն ինչ կը սկսէր տփոցի սկզբնաւորութիւն մը ընել, երբ մեր թաղին մսավաճառը որ նոյն պահուն բարեբաղդաբար կանուխէն հոնկէ կանցնէր, միջամտելով վերջ տուաւ գործին, որ անպատճառ անհաճոյ վերջաւորութիւն մը պիտի ունենար:

Ահա թէ ի՞նչ փորձանք բերաւ բանաստեղծութիւնը գլխուս:

Հաւատացէք որ յարգելի մաավաճառին
կը պարտիմ — երեք հարիւր տասն . . .
ինչ կըսեմ — պատիւս ու տփոցափրկու-
թիւնս, որուն մատուցանելով . . . etc

Մնամ

Սկիւտար

ԵՐՄՈԳ

ԽԵՂՃ ԴԱՄԻԱՆՈՍ

Ճ Փողոցին մէջը երկար
Դամիկ անուն տղայ մը կար,
Որ բնակէր իր մօրը հետ
Զ'ունենալով հայրիկ մը գէթ:

Սիրուն պզտիկ ու աղւորիկ
Հարսուտիւն մը կորիկ
Կը փնտրէր մեր Դամիանոս
Լաւ անցնելու իր կեանքին հոս:

Յայտնեցայ ա՛ն վերջապէս
Ըսաւ ցաւեց կասուի պէս
Մտնումս Զրանդի ջոջ
Տիրանալու անոր ֆրոջ:
Եւ շատ չ'անցած ըսած օրէն
Մտնումս արագօրէն:

. . .

Զարուհի եր մի աղբիկ շուրջ
Որ խնդիրը դառնար իր շուրջ,
Դամիկի պէս եւ այլ մարդոց
Նա չ'եր նայէր անգամ փողոց:

Օր մը եղաւ որ Զարուհին
Նշանուեցաւ հետ Զարեհին
Պարոն Դամիկ երբ ինացաւ
Մտնել իջաւ սասիկ մի ցաւ:

Առաւօտ մը կանուխ եղաւ
Կաւ գեղ կընեւ ըսաւ կաւ լաւ
Դնաց գաւ միւսի Զարեհ
Ըսաւ եղբայր ի փոխարեւ
Ինծի տուած մէկ խոսուելին
Զգուշացիք առնել ձեզ կին:

Հայտն օնտան ըսաւ Զարեհ
Ինչ որ կրնաս գնա ըրէ
Պէտք է՛ք խօսքեր պարսպ ու սին
Անոր համար ե՛ս ամուսին:

Պարոն Դամիկ անկէ իսկոյն
Վերադարձաւ շուտ մը իր տուն
Մինչ առաւօտ մնաց անփուն
Կը մըրըջար ֆթին տակէն
Զի կարենալ գալուն հախեն:
Կիբրտի Զարուհ, կիբրտի փարա,
Ճեպիւմ, եիզիւմ օշու գարա:

ՆԵՐԵԱՊՈՒՆ

ԱՆԿՈՒՏԻՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՆՔՆԵՐԸ

Էօֆ սա անկուտիութիւնը, սոսկալի է ի-
րաւոր:

Դուք ալ սիրելի ընթերցողներս, խոստովանեցէք ինծի հետ թէ՛ յուսահատական բան է գրպանը տասնոց մը իսկ չունենալը:

Բայց ի՞նչպէս հասկցնել սա գեղեցիկ եռանկիֆո մօխսրայի ձագերուն թէ՛ ամբողջ սիրտ մը ունինք իրենց սիրոյն զոհելու, սակայն գրպաննիս կուտ մը չկայ զոհելու համար իրենց հաճոյքին:

Բախտն ալ գործ չունի, կերթայ ուր որ կայ գեղեցիկ, գառնը ետըզ մագերով, չիք քոստիւմով զրազիր (որ թարգմանի սրճեփ չրախ) մը, անոր օձիքին կը փակչի եւ անոր ճակատը կը դրոշմէ անկուտի բառը, որ աւելի խայթող հանգամանք մը ունի քան գեղեցկայտն թողայեան բարեկամիս եւ հրեշտակատեսիլն վահան Փափագեան ճանչնորիս ակնարկութիւնները:

Բարեբախտաբար ես, ձեր խոնարհ ծառան, եթէ անկուտի եմ, գոնէ զայն ցուցադրելու անհարկութենէն ազատ եմ:

Բայց ի՞նչ ընեն այն անկուտի բարեկամներս, որոնք այս փոխանցիկ ախտին հետ ունին նաեւ անխուսափելի սիրուհի մը, որուն գոնէ երկու երեք պնակ մահալիւսի կերցնելու են, արժանանալու համար մէկ հատիկ մուսկապիթի համբոյրի մը, անոր սվալթոյը այտէն:

Միսիւ զըփզըփ Գրիգոր մէկն է այս երանելիներէն:

Յօգուածիս թիրը եղող Գրիգորը գեղեցիկ է, գրագիր է, չիք է, երիտասարդ է, բարակ գաւազան կը գործածէ, միշտ նոր հագուստ կը հագնի, եւլն. եւլն.:

Անկուսի է ու սիրուհի մը ունի, ինչ որ իր անկուտիութեան միտքարելի եւ անմեղադրելի միակ կողմն է:

Խեղճ միսիւ Գրիգոր, իր անկուտիութեան պատճառաւ կը ստիպուի ամէն շաբաթ սիրուհի փոխել, բայց ամէն շաբաթ ալ ունի հատ մը այդ ապրանքէն, շնորհիւ իր գեղեցկութեան՝ որ իր մէկ հատիկ բարոյական հարստութիւնն է:

Բայց գեղեցկութիւնն ալ առանց դրամի, չի նմանիր միթէ մոգական լապտերի մը որ լոյս չունի:

Բոլոր իր սիրուհիներուն ձեզ կը սիրեմ, կը պաշտեմ կ'ըսէ, անոնք ալ կը հաւտան, բայց իր սիրոյն ապացոյցը չի տար, այսինքն մահապաշտի չի կերցներ: Ահա իր ամենէն մեծ ցաւը, որուն համար կ'որոշէ անձնասպան ըլլալ:

Բայց ի՞նչ օգուտ անձնասպանութիւնն ալ, չէ՞մի որ անդիւր աշխարհին մէջն ալ պիտի փայլի իրրեւ անկուտիութեան Քառնէկին:

Իր վերջին սիրուհին, որ գեղեցիկ մօսիսքայայտախոսի մըն էր, վերջապէս իր dernier motն կ'արտասանէ՝ «կամ մահապաշտի՝ կամ թաժանուր»:

Այս բառերուն վրայ շատ կը խորհի միսիւ Գրիգոր, ճիշտ Գրիգոր Մալխասի պէս, եւ to be or not to be որոշումը կուտայ:

Կիրակի իրիկուն թեւը առած օրիորդ էլէնին, իր հանդիսաւոր մուտքը կ'ընէ մի ոմն հաճի իրիսթօն մահապաշտի խանութէն ներս: Խանութին ճանճորս սպասաւորը միսկին միջօ, մարդորս կը դառնայ:

Չերկարեմ սպասուած մահապաշտները կուգան, ի՞նչ մահապաշտի, ի՞նչ մահապաշտի, մէյ մը ուտողին՝ մէյ մըն ալ ուտելը կուգայ, եւ ի հեճուկս միսիւ Գրիգորին, գեղանի հեղինուհին հատ մ'ալ, եւ հատ մ'ալ կապալդէ: Ա՛լ կրնաք երեւակայել խեղճ միսիւ Գրիգորին ներսիդին, ուր գա-

ցած մահապաշտն տեղ չգտնելով՝ կ'որոշէ յետս նահանջել:

Եւ ահա կը մօտենայ ահաւոր վայրկեանը վճարման: Գեղեցիկ էլէնին «դա թաւի» կը հարցնէ:

Բայց վճարումը, այդ իսկ է խնդիր:

Բաւական մը երեւտկալէ ետք, գաղափար մը կ'ունենայ միսիւ Գրիգոր:

Իր նստած տեղէն ելլելով՝ յանկարծ կը մօտենայ փողոցի դրան եւ բոլոր ձայնովը «միսիւ՛ւ Երուանդ, միսիւ՛ւ Երուանդ» պօռալով քիչ մը դուրս կ'ելլէ եւ մէյմըն ալ ֆէրթի՛կ, կը չուէ, քիթին տակէն մուտալով՝

Անկուսի եւ անկուսի

Գանձաւան մը նոր սուսի:

Իսկ ասդին տիւպառայի եկած օրիորդ էլէնի, քիչ մը կարմրելէ, մարմրելէ յետոյ՝ կը յաջողի վարպետութեամբ մը գիւղացի ելլել հաճի իրիսթօն հետ, եւ պառպա իրիսթօն երեսին անանկ մը կը նայի, անանկ մը կը նայի՝ որ այս վերջինը կը ստիպուի մահապաշտի մըն ալ կերցնելու օրիորդ էլէնիին:

ՍԵՊՈՒՂ

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

Համեստուհի դագերաճի

անուշիկ աղբարիկս,

Քա ճանըմ անուշիկ աղբարիկս, անցած շաբաթու Պէյ օղլու տասնը հինգ շուրուշ կիւնտէլիկով, պուզաստէն լաթ հանելու, մանրուքներ լըվալու քացած էի, ետ դարնալիքէն առջեւս թըֆըլ կըտրիճ մը կերթար կոր, պաշխա կըտրիճ մըն ալ ասոր դէմը ելաւ, պօղլուր պօսիւ թօղլաւան չըսէ մի, ֆուկնկճէ հասկընալուս համար անիտէ ճիվան բեսացուս ըլլալը հասկըցայ, վուր բարով այսպէս ըսաւ, ան ալ ճիւնէրտէքի շարքի՛ն կերթամ կոր ըսաւ:

Չարուճախ թարկմանցի քի, շարքիները սըթիւր բիւթին տէյ ճիւնէրին մէջէն կը կանչէ եղէր, առուառ ըսաւ ձեռքին ալ բառտօն մը ըրաւ կընաց:

Քիչ մը անդին ալ թրանվայ մը կը պէք-

լէէր կոր, պէս պէս իրենք ըլլալու էր քի մէջը միս մինակ նստեցաւ, իր թրանվայովը տէյ ճիւղերտէքի շարքիէն կընաց:

Ես ալ շիպչիտակ տունս կացի, իմին բէկ մօտիկ մէկ խըսըմըս, տալօջս պարօնատին աղբօրը աղջիկանը, տալօջը կնկահարին, մարը միսափիր եկած էր, սէվտալը տիւրիւկ կըսեն, ան ալ նոր հարսը արեր մեզի միսափիր տուն եկած էր:

Ճիվան բեսացուս տէսածիս պէս աղւոր մը գրաբարձայ նկանակեցի:

Հիմայ ես ալ մախուս կը գրեմ կոր քի, հիմաճուկվան տուրսուննական բանժուհիները սօրվին տէ, չիչէք ղազէթաին մէջը ասանկ պիչիմի գրաբարձայ նկանակին իրենց սիրականները:

Ճիվան բեսացուս, պիչիմի էրկան պօլլու, պուղտայի, խուճրալ մազէրով, ան պարակուկ արուն չի ծըծող սիւլիւկի պէս, սիւրմէ իբլիններ ունի, քա անանկ անուշիկ խընտըվածք մը ունի քի, աղջիկան մը ճիւղերը տալխին հետ մէկտեղ կը քաչէ տէ կը հանէ, թէմիզ բակ վանճառականի պէս կը հագուի, եանի եայ սանկ բաշաները ալ բանդալուն մը հագնի տէ, օխտը խուլանոց ճերմակ կօտի մը մէջքը կապէ տէ, էօքճէն կոտրած խունտուրայ մը հագնի տէ խաութիէ ճամէտանն ալ հագնի, կըլօխն ալ դիրիչէ օյեալը եազմա մըն ալ կապէ նէ կայ եայ, թըպխը մէրասեէտի հօվարտաները պիտի ըլմանի, քա եազմում տահա բէկ թըփըլ է, հիչ պըլըխ չունի, պըտըտիկ պէրան մը ունի քի, թըպխը տուտու խուշի կըլմանի, աղջիկս առաջ տատայի պէս պիտի սիրէ ամայ, սօղրայ ալ պըլըխները կալուն պէս կընիկի պէս պիտի սիրէ:

Իշալահ պսակին օրը ճիվան բեսացուիս ճակատը կը պագնեմ ըսի նէ, անդիեէն սէվտալը տիւրիւկը ատ սէվտայէն վազ անցիր ըսաւ, ինչո՞ւ ըսի նէ, ըսաւ քի, հիմայ հէքիմին մէկը ղազէթաներուն մէջը գրեր է քի, էրէս պագնելը, ծառք պագնելը պուլալըխ հիւանդներու պէօճէքները իրարու կանցնէ եղէր տէ դիմացինն ալ հիւանդ կըլլայ եղէր:

Քա մեղայ, նասըլ ալ ույտուրմիչ կընեն, Թօսս զատիկին շարթուն չիչէկէն պառկեր

էր, տէրտէրս տուն օրհնենքի եկաւ վրան խաչահանգիպտ ըրաւ, Թօսս սօնդրա խաչն ալ պաքաւ ձեռքն ալ պագաւ, արեւուն մեռնիմ, տէրտէրս բան մըն ալ շեղաւ, քա ճանըմ օրդտի, աչքերնին չի տեսնար կոր, մեր սրբազանը երեք սահաթ պատարագ, երկու սահաթ քարոզ կուտայ ոտքի վրայ հիչ չի նստելով, հոգնած դադրած պատարագէն կիչնայ կոր, հազարաւոր մարդիկներ սուրբ աջը կը պաքեն կոր, ատոնց մէջը հիւանդներ ալ կան, ինչո՞ւ համար, Աստուած պահէ, հիւանդ չըլլար կոր, աստուծոյ շարթուն անմէն տեղ կերթայ պատարագ կընէ, հոռոմը, հայը, հիւանդները, էխտիեարները, չօժօխները արգուներով կերթան, սուրբ ձեռքերը հիչ մէկուն չի գրկեր կոր, իլլէ ան պզտըլիկ մախսըմներուն խնդալով շօհնով սուրբ ձեռքը պաքցունել կուտայ կոր, վէհէր մեծ կարքաւոր ըլլալուն մաքրորները իրմէ կը վախնան կոր, Աստուած կարքով պահէ տէ իրեն շուքը մեր վրայէն պակաս չընէ:

Քա ճանըմ օրդտի, անցածները զէնկիւնին մէկը ամէլիքան պէզիէն խապար խրկեր է քի, ովքի ըրախի խմէլէն վազ կայ նէ, ըրախին գիւտներուն վրայ գրելու ըլլայ նէ, շատ մենծ պախիչ պիտի տայ եղէր, հիմայ ալ ժամուն քէօլէն խախփէճի պապա Յովհաննէս կըսեն, ան ալ վատ է ըրեր քի, իրիկունները ով որ մեխանէն ըրախի խմելու շերթայ նէ, պօլ շէքէրով ճապայ խախփէ մը իբրամ պիտի ընէ, աս պապա Յովհաննէս ըսածս վախիթով մէխանէճիւթիւն ըրեր է, վաստըկածին խէրը չի տեսնալն զատ իրեն ունեցած վարիէթն ալ վրայ տուվէր է, իշտէ խըմօղին ճիւղերը իլլէն բարան չիւրիւմիչ կըլլայ, ծախողինն ալ:

Քա ճանըմ օրդտի, առջի գիշեր իշկմպէ խաղանի Թուրֆանտուն իլլէն, սէվտալը տիւրիւկը, վրաս բարի Թօրալ Թագուհին մէզի վիզինդայի միսափիր տուն եկած էին, ույ հէմն տակնուվրայ ըլլան, տարիքս օրդան ձգեցին, պարէ հիսապէ խապար ունենան նէ կէնէ ինչ է նէ, հիմայ տարիքս մախսուս կը գրէմ կոր քի, ամէն մարդ, հէմ հիսապ սորվի հէմ ալ տարիքս:

Տէմիր խաբուին կրակէն վաճուն տարի

առաջ բարի էկերէմ, աշխարհք էկերէմ, դա-
մամ տէմիր խաբուն կրակը քարասուն տա-
րի կընէ կոր, վաթծուն ալ անկէ տուջ,
դամամ հարուր տարի կընէ կոր, գիշերները
հիսապի չեմ դըներ, չիւնքի քնացած ատեն
աշխարքէն խապար չունէի, աշխարքին մէ-
ջէն իծծունը հանէցինք, մնաց իծծուն, քսան
տարի ալ սըրաճայէն պառկեցայ, դամամ,
դաւ դամամ հիլլէսիդ խուրտասըն երէտուն
տարէկուն կատանայի պէս կ'էնձ կընիկ եմ:

Քա ճանըմ անուշիկ աղբարիկ, քեզի
անկարեայ մը ունիմ տալիք, եանի եայ ը-
նէս նէ կայ եայ, չար խաբանին առջին ար-
ծաթէ խանտիլ մը կախած պիտի ըլլաւ:

Մահմուտ բաշա կերդաս, ան տեղ Սօ-
ղանճեան Արամ էֆէնտիին խանութը կայ,
հինգ տիրէմ սաչ պօեայսի իլէն, մէկ տիրէմ
ալ ըռասաըն պօեասի կարնէս, ես ալ մա-
զէրուս տակի ֆշըրմիշ եղած ճերմակներըս
աղւոր մը սկզբունեղէս սօղրա աղւոր մը ը-
ռաստըններս կը քաշէմ, զաթը աղւոր եմ
եայ, մէյմը, մէյմը տահա կըլլամ, չըլլայ
քի պաշխա տեղէ առնէս, չատերը չիվիտով
կընեն կոր տէ չի պրնեղն զատ մարդուն
տէրիներըն ալ կէրէ կոր, աս խանութը
պէլլի պաշը է:

Քա ճանըմ օրդտի, անմէն զապէթային
մէջը գրող կրակէտուհիները մէյմէկ կրա-
էտ կառնէն կոր, քա օրդտի ես ինչո՞ւ
մնամ, ես ալ կրակէտուհի եմ հէմ
տուրսուննական, ամէն չարթու ալ հօտած
կը դրեմ կոր, իշտէ ըսի եայ կատանայի
պէս կ'էնձ եմ, հէմ ալ աղւոր, ես ալ զը-
րող մը կառնէմ, աղջիկս Թօղլաեանին
տալէս սօղրա չոր կըլտի պիտի մնամ, անի-
կայ ինծի բէկ աղէկ կը վայլէ, սանկ աղւոր
մը կլխուս պօեան դընեմ. ըռաստըններս
ալ քաշէմ, աղւոր մը հակվիմ սքվիմ, զաթը
ճէպ ճերմակ եմ, կարմիր բուտռայ մըն ալ
կը զըսէմ, ինծի տեսնողին բերանին ճուրե-
րը կը վաղծունեմ:

Ճամբան կացած ատենս ալ էրկանս խօշ-
թուխը մտածիւ պէս, օմուզներնուս վրայ
ալ բլաբօն մը իլէն օրդայ եէլքէնի մը կը
պանանք, ինքըզինքնիս կիւն տօղրուսի բօր-
եազիին անաֆօռին տալուս պէս եէլքէնէր-
նիս էրկանս բօրին պէս կուռէնայ տէ սանք

խըղով մը երթանք նէ կայ եայ, ան բիւ-
թիւն տիւղմաննիս խըրսէրնուն՝ ճաղիկ, ճա-
ղիկ կուգան:

ԹԱԼԻԹԱՅ

ՀԱՄԱՐԱՐԱՄԱՆ ՏՕՆԸ

Ե Ի

ՎԼԻԻՃԱՆ

~~~~~

Այս Հինգշաբթի օր Համարձման փօնը  
եւ Սղգ. Հիւանդանոցի 74րդ. տարեդարձը  
տօնուեցաւ Փրկչի պարտէզին մէջ, ի ներ-  
կայութեան խուռն բազմութեան մը, որուն  
մէջ կը նշմարուէին ի մէջ այլոց, խմբագիր-  
ներ՝ որոնք հանրային ճաշերու ներկայ պէտք  
է գտնուին անխուսափելի կերպով, նկա-  
րագրելու զանոնք, ճաշելէ ետք անշուշտ:

Վարդապետներ, քահանաներ, որոնք ի-  
րարու կենաց զաւաթ ու ճառ կը պարպեն  
հոն ամէն տարի այս օրս:

Նունեա, Սողոմիկ, Նոյեմզար տուտու-  
ներ, որոնք օր առաջ պատրաստած տոլմա-  
նուն գնահատականները լսելու կը փութան  
հրապարակաւ, ձիւնածաղիկ տուտուներ օդ  
առնելու եւ օր տեսնելու համար:

Գում-գարուցի, Սամաթիացի, Սկիւտարցի  
եւ Բերացի օրիորդներ՝ վարժապետներ, չօ-  
ճուս գրագէտներ, որոնք օգտուած են նոյն օրը  
գարոցները գոց ըլլալէն, համեղ կանկառները,  
զորս գնելու համար պէտք է դիմել տնօրէ-  
նութեան՝ 1-10 ժամուան հաճելի ճամբոր-  
դութիւն մը ընելով, եւ, ես, դուն, ան,  
մենք, դուք, անոնք:

(Ինչպէս պիտի ըսէր, իրիւր ընթերցող,  
ոս երգիծարան ԿԱՎ, ԿԱՎ, ի՞նչ էր անունը,  
հա՛, ԲՕՇ):

Սիրքէճիի կայարանը առտուանց արդէն  
եռածայն պատարագի օրով եկեղեցի մը  
դարձած էր: Աղմուկ, խնդուք, կովաշնչում,  
եղահաղ, կարգադիր մասնախումբ մը կազ-  
մած էին խռնուելու վրայ եղող բաղմութիւնը  
անհանգիստ ընելու համար:

«Քա մայրիկ, «սուս աղջիկ, «քա հաճի  
աղան վո՛ր թարաֆն է», «ու՛ֆ սքարբիներ»

րըս), (աման քօրսէս), (ատ ինչ կսմիտ էր), (վոյ աչքը քէօնայ) եւլն. ահաւասիկ սոր-  
րանօններ: «Օ՛ բարեւ», (դո՛ւք ալ հոս),  
(հապա՛), (երէկ ինչ ըրիր), (ետեւէն շատ  
խովաւամիշ ըրի՛ր), (կարպի՛սը ուր է),  
(Սուրբիկը նայէ), (օ՛հ ճանընը եէյիմ) եւլն.  
ահա քեւօրներ:

(Մօ րախըյի չիշէս աղէկ պունէ), (քիչ  
մըն ալ դուն պունէ տա սէլէն), (չօճուլը  
նորէն վար տուաւ), (կնի՛կ, մատիկ օյնի  
չեմ ուզեր), (վայ գարը), եւլն. ահա  
ֆօնդոր պասօներ:

Վերջապէս Յ 1/2 ժամ ոտքի վրայ սպա-  
սելէ, երկու երեք շոգեկառք փախցնելէ  
ետք, հազիւ հազ կրցայ ինքզինքս վակոն մը  
նետել, ուր ինչ առաջ արդէն նետուած  
էին, պինիք հաճի աղայ մը, տակառ (որուն  
մէջ գինիէն տարբեր բան մը կար) տիկին  
մը, չէօփ օրիորդ մը, հող տուտու մը, չիք  
միւսիւ մը, նոր հարս մը, ուրիշ հարսնցու  
մը, երկու կերակուրի սէլէ, երկու կիրկի  
տղայ, եւ ես: Այս փոքր թիւին վրայ ա-  
ւելցուցէք նաեւ կէս թօնօնոց քօնտիւքդէօն  
մը, որ պիլէթլէրի պագաճաճմ ըսելով ներս  
սարդեցաւ: Մահանայ, անպիտան մարդ, ես  
հասկցայ, բայց ինչ օգուտ որ նոր հարսերը  
չհասկցան, հակառակ մարդուկին մէկ մատ  
ինքուրներուն:

(Փերթիփ) կը պօռայ քօնտիւքթէօնը: Հէ  
վէրտիք եա, կը պատասխանէ հող տուտուն  
եւ շոգեկառքը ճամբայ կ'ելլէ:

Գուճ-գարու հասանք, դաշկինակը գըր-  
պանէս հանեցի քրտինքս սրբելու համար:  
Հաճի աղան որ քէչի պօյնուզի մըն է եղեր,  
(օղլում, ըսաւ, դռան վրայ եղըլմիշ եղէք  
որ մարդ չկայ):

Հէ, ատ ինչ աղուոր բան է, եւ հաւա-  
տացէք բոլոր ուժովս եղըլմիշ եղայ, բայց  
պէտք է ըսել, որ երկու նոր հարսերը ար-  
դէն գլուխին պատուհանէն դուրս հանած  
էին:

Եէնի-գարու երբ եկանք, սկսայ դժուա-  
րաւ շնչել: Սամաթիան մարմին-աբարթըմա-  
նիս թէ մանասդըր եւ թէ, ռե-սը-շօսէն ջուր  
կոխած էր:

Երկու վայրկեան ալ եւ ահա հասանք  
Եէտի-գուլէ:

Խալի թօթված ատեննիդ փոշին տեսած  
էք: Հիմա դիտեցէք շոգեկառքը եւ թող  
ժողովուրդը դուրս թափի փոշիի պէս:

Ամէն տեղէ հայն ու յոյնը, պասմաներու  
պին պիր գոյնը, հոն խռնուած էր հաւա-  
տացէք:

Եւ կըսկսի խուճըր կազմուիլ, դէպ ի խալէ  
ուրկէ անդին, Փրկի՛չ:

Քառորդէ մը կը հասնիմ Փրկիչի դուռը:  
Առաջին ծայնը որ ականջիս կը հասնի՝ սա  
կ'ըլլայ «Փրկիչ իշխուն Մանգումե, վիճակ  
օջու հանրագիտակ»:

Թիմարներու պատգամաւորութիւն մը կըն-  
դունի մեզ դռնէն. որոնց հսկողներուն պետը  
չէր գտնուեր նոյն պահուն, Վանլեան էֆ.ն:

Կը մտնենք ներս, ճաշը շատոնց աւար-  
տած է, եւ բարձրաստիճանները կը ճեմեն  
մարսելու համար կերածնին:

Տեղ մը գրեր էին թէ՛ նոր շինուած չէն-  
քերը կը փլչին կոր, ո՛վ է ըսեր, ես աչքովս  
համրեցի, քսանի չափ եպիսկոպոս, վարդա-  
պետ եւ քահանայ, որոնք յետ ճաշու կը  
ճեմեն նոր չէնքերու բոթրէլներուն վրայ:

Փրկիչի այցելութիւնը աւարտելէ ետք  
կուղղուիմ պարտէզ:

Հէ՛: Այս ի՛նչ է Աստուած իմ, տասը  
հոգի հոս, քսան հոգի հոն, ափ մը մարդ-  
հունա, փուռ մը մարդ հուսա, ամէնն ալ  
փռուած, ամէնն ալ լուրիկ, երբեմն կուտեն,  
երբեմն կը պուռկին, վերջապէս թապլօներ,  
որոնք անդրկամուրջ եւ անդր պոսֆոր կը  
բուրեն:

Գեղեցիկ խուճըր մը կը նշմարեմ եւ Համ-  
բարձումի նիւթ հաւաքելու համար, սանկ  
կը մօտենամ եւ ծառի մը շուքին տակ կ'եր-  
կըննամ:

Հիմա ֆօնօկրափի դերը ես կատարեմ,  
եւ դուք ալ լսեցէք սիրելի ընթերցողներս:

— Էօ՛ֆ մայրիկ, մինչեւ իրիկուն ասանկ  
պիտի տոտոռոզլանմիշ ըլլանք նստինք, նայէ  
հայրիկը խըռ խըռ կը քնանայ կոր, տու-  
տուն անդին եղըլմիշ եղեր է, թէյզէս ը-  
սես նէ իշտէ եան էկէր է, մայրիկ, նայէ  
միւսիւ Լէօնն ալ կը նեղուի:

— Ես, ոչ օրիորդ ընդհակառակը, ձեր  
բով երջանիկ ժամեր կանցնեմ կոր:

— Ի՛նչ կ'ըսէք պարոն:

— Բայց ըսէք, կաղաչեմ, միւսիւ Լէոն, ասանկ ծուռնի բարեւ նստիլ կըլլայ մի եւ՛:

— Անշուշտ ոչ:

— Միւսիւ Լէոն, մեզի չէ՞ք կրնար էյ-լէնծէ մը իճատ ընել:

— Ինչո՞ւ չէ հոգիս:

Եւ միւսիւ Լէոն, անմիջապէս ոտքերուն վրայ կը դառնայ եւ շունչը շիտակ պարտե-զին դուռը կ'առնէ, եւ գրպանները երկար բարակ պրպտելէ ետք քառուսնոց մը կը գտնէ ու անցեալ շարթուան «Հանրագիտակ» մը կիւճակէլա գտնելով կը վերադառնայ:

— Ինչ է ան միւսիւ Լէոն:

— «Հանրագիտակ» խօշպանճի թերթեր-նիս:

— Իրաւ, բայց արդեօք ընթերցո՞ւմ պի-տի ընենք:

— Ոչ, այլ, թերթին աշխատակիցներէն պարոն ՆԵՐՇԱՊՈՒՀ Համբարձման ՎԻՃԱԿ-ՆԵՐ պատրաստեր է, հիմա ամէնքնիս մէկ կ'ըլլանք եւ կը սկսինք վիճակ քաշել, աղուոր չըլլա՞ր օրիորդ:

— Ինչո՞ւ չէ, բայց ո՞վ է այդ պարոնը:

— Չեմ ճանչնար չիտակը, բայց աղուոր կը գրէ կոր:

— Իրաւ, հայտէ անանկ է նէ քաշենք:

Եւ օրիորդը կը փութայ խումբը կազմել, նախ հայրիկը կարթնցնէ ոտքերէն քաշելով, թէյզէն «հայտէ պոռալով» եւլն:

Օրիորդը քանի մը ուրիշ ընտանիքներէ աղջիկներ եւ մանչեր ալ կը ժողվէ եւ 40 հոգինոց խումբ մը կը կազմէ:

Միւսիւ Լէոն «Հանրագիտակ»-ը ձեռք կ'առնէ եւ կոկոզավիզ խումբին մէջ տեղը կայնելով՝ նախ տուտուին կը ներկայացնէ ԱՅՅ ԲԷՆԻ տախտակը, մատերնիդ վրան պտտցուցէք աչքերնիդ դոց:

— Փէք աղէկ օրդի:

Օրիորդը միւսիւ Լէոնին ուսին վրայէն ցուցուած տառերը կը կարդայ:

« Բ » ելաւ:

Միւսիւ Լէոն կը սկսի կարդալ:

« Բոպէ մ'առաջ քաշէ տեսնեմ վիճակդ Զէրէ փէք... կը դուչակեմ կոր քու հալըդ:

— Քա մայրիկ, աս ինչ աղուոր ելաւ:

— Թէրճէմէ ըրէ նայիմ տղաս:

— Սա վիճակըդ չուտ քաշէ, զէրէ հա-լըդ մօտիկ է:

— Քա բերանդ սիրեմ զաւակս, քա տու-տու նայէ ինտոր ալ գիտցեր է քու հալիդ մօտիկնալը:

Հանրագիտակը թէյզէին կը տարուի:

« Փ » ելաւ:

« Փանելային պատմութիւնը չմոռնաս, էրկանըդ հետ ետուր մեկար որ չիլաս: (Երեսըս ծառին դարձուցած ըլլալով՝ սը-վաները թափած դէմքերը չի կրցայ դիտել): Հաճի աղային առջեւ կ'երթան: ]

— « Վ » ելաւ, կարդացէք նայինք:

Վարդ այտերէդ համբոյր մը տաս ինձ եթէ Վստահ եղիր բան չի պակսիր գըրեթէ:

— Քա վույ, անլման էրիկըս, անոր համար ամէն ըսածս կը պերես կոր, մոռ-ցար քա, զէյթինեաղի պիտի բերեմ ըսելով էրեսիս վրայ ետղըրներ պացիր:

— Օրիորդ դուք պտտցուցէք մատերնիդ նայինք:

— Չ գիրն է, կարդացէք նայինք:

Չըսեմ պիտի վստահ եղիր ով աղջիկ եթէ կուտաս դուն ալ ինձի մէկ պաչիկ: Հոս օրիորդը միւսիւ Լէոնին կը նայի, ան ալ օրիորդին, եւ երկուքն ալ կը չիկնին եւ նայուածք կը փոխանակեն:

Կարգը ձերն է միւսիւ Լէոն, ընտրեցէք նայինք:

— Տ, դուք կարդացէք օրիորդ:

Եւ օրիորդն կը կարդայ:

Ծաւով կ'ըսեմ չի վշտանաս աղուորըս:

Քեզ սիրողներ կը պակսին կոր այս օրըս: Տարեցները չեն հաւնիր այս վիճակին, մինչ օրիորդը քթին տակէն կը մրմռայ՝ ո՞վ ըսաւ, եւ միւսիւ Լէոն եւ մէյմըն ալ ինձի հարցուցէ՛ք:

Խումբին միւս անդամներն ալ մէյմէկ վիճակ կունենան որ ոմանց երեսը կը թըթ-ուեցնէ եւ ոմանց ալ կը խնդացնէ:

Ա՛լ բազմութիւնը կը սկսի կրկին խլրտիլ սէլէները կը գոցուին, պզտիկներուն տակե-րը կը փոխուին եւ առջի խումբը նորէն կը կազմուի դէպ ի կայարան:

Եւ ես անոնցմէ առաջ կը փութամ հոն աղուոր սեղ մը եւ ընկերներ գտնելու յոյսով:

Տիկին Թուրֆանտային ամուսինը՝

ԳԱԼՈՒՍՏ ՆԱԶԱՐԷԹԵՍՆ

# ՏԻՊԱՐ ՓԵՍԱՅ ՄԸ ԵՒ

## ՏԻՊԱՐ ԵՂԲԱՅՐ ՄԸ

(Շար. եւ վերջ 18րդ թիւն)

Ուրիշ իրիկուն մը Մեղիտոս աղան ըստ սովորութեան գինետունը նստած երբ կը խմէր, բայց այս անգամ զուարթութեամբ, բարեկամ մը Մեղիտոս աղային քովը մօտե- նալով.

— Մեղիտոս աղա չօճուգ նասը՛ւ տըր:

— Համոտ օլսուն պիր ալ էյի տիր:

— Աճապա գօճասը նէ՛ սէվինիր, (չա- բամիտ հարցում մը որ Մեղիտոս աղային բե- րանը բանալու զօրութիւնն ունի):

— Քօճասը՞ մը ... պրա՛գ շու էօքիւզիւ, պրագ շու աւանակը, չօճուզն աղըր կիւն- լէրինտէ անասընա խափիժ բիշիրտմիշ եէմիշ, պիր աղընը տա պիզիմքինէ վէրմիշ քի գա- ըսընա վէրսին տէյի, ծօ ալաղլարընըզըն ալթընը էօրէյիմ ... օ՛ տէրէճէ խասթա քի, էթ սույունլա սիւտիւ պիլէ եուտամայօր ... խափիժ եէյէպիլի՛ր մի, ա՛ սըղըր ... ամա նէմէ՛ լազըմ, կէնէ աղըր լաֆ իթմէմ, չիւնքի կիւվէյիմ տիր, կիւվէյի տէ էվլատ տէմէք տիր:

Ժամանակ կանցնի եւ Մեղիտոս աղային բարեկամները հետաքրքրութեամբ իրարու կը հարցնեն.

— Գասպարճա՛ն, պիզիմ Մեղիտոս աղա- տան հապէրին վա՞ր մը:

— Խայըր, չօքտան աըր կէօրտիւյիմ եօգ տըր:

Ուրիշ մը. — Կէչէն սապահ պողազ իշի վաբօրընտան տիշարը չըգըյօր ըտը կէօր- տիւմ:

— Տէմէք քէօյէ կիթմիշլէր:

— Էօյլէ օլմալը:

Իրիկուն մը Մեղիտոս աղան գործի պատ- ճառաւ գիւղ շէ գացած, գինետունն է, բարեկամները զինքը կը շրջապատեն եւ կը մեծարեն:

— Շիւքիւր կէօրիւշտիյիմիզէ, Մեղիտոս աղա:

— Շիւքը:

— Քէօյէ կիթմիշլինիզ:

— Տօղրուսը պու սէնէ կիտէճէք նիյէ- թիմիզ եօք ըտը ամա, պիզիմ Գէորգ գըզ- գարտաշը իշիւն կիտէլիմ տէտի իսէ, եօգ տէյէմէտիմ, սաղ օլսուն, պիր իքի ալ իշին- տէ գըզգարտաշընըն ուղուրունա 50-60 լիրա բարատան չըգտը, համոտ օլսուն ալաղա գալգտը:

— Քօճասըտա պիրապէր քէօյէ կիթաի՞ մի:

— Պրա՛գ շու աւանակապետի, պիր կիւն պիզիմքի, չօճուգ էյի օլմայա եիւզ թութ- մուշ տը ամա, պուսուն էլինէ պիր պինլիք վէ- րիր քի թաշտէլէն սույու ալսըն տէյի, պու նէ՞ եափսա պէյէնիրսին, էվին քէօլէսինտէ տէրքօս չէչմէսի վար, օրտան տօլտուրըյօր ըմըշ, պիզիմքի տէ բէնճիրէտէն կէօրմիւշ, էվէ կէթիրմիշ իսէ էլինտէն ալմըշ քէօրէք եալաղընա տէօքմիւշ, Շիմտի թօաֆը նէր- տէ, պիզիմ Գէորգ գըզգարտաշընըն սան- տըղընը, սէրէթինի, թէքմիլ օլուպ օլանճա- սընը ալմըշ պիզիմ կէօլէրլէ քէօյէ կէթիր- միւշ, քէօյտէն տէ տօղրու պիզիմ էվէ էնտի- րէճէք:

— Զանն էտէրսէմ Պ. Գէորգ ...

— Զանն էթտիյին կիպի, գաֆասընը տիքմիւշ, չօճուգ տէյօր քի, պուստան պէօյլէ էօյլէ աւանակա գարը տէյիլ քի, էթէյինի պիլէ կէօսթէրմէմ, Զըգան բազար կիւնիւ էլլէրինի սալլայա սալլայա գալքմըշ քէօյէ կէլիւշ, նասըլսա էվի սօրա սօրա պուլմուշ, պիզիմ Գէորգ տա էվտէ իմիւշ, էնմիւշ գա- րույը աշմըշ, պուսու պիր գօվմագ գօվմուշ, պիր գօվմոգ քի, թարիֆ էտէմէմ, պու զէ- վալը հայվանճըգ տա նէ տէյէճէյինի նէ ճէվապ վէրէճէյի շաշըմըշ, կէլտիյի կիպի կէրի տէօնմիւշ կիթմիւշ, Զօճուգ պազի տէ- ֆա էօյլէ շէյլէր նազլ էտէր, չէքտիքլէրինի, գօճասընըն անասը իլէ հայվանճասընա պիր օլուպ էթտիքլէրինի, ինանը՛ն, տօսթլարըմ, խըրսըմտան պաշըմա աղըր կիրէր: Ամա նէյիմէ՛ լազըմ, կէնէ պիր շէյ սէօյլէմէմ, չիւնքի սէօյլէսէմ նէ խայըր էտէր, պին սէօյլէ աւանակա, կէնէ աւանակ տըր աւա- նակ: Իշթէ, տօսթլարըմ, պու իշ սիզլէրէ նասիհաթ օլսուն, սաղըն օլմայա քի պա- պալարընըն զէնկինլիյինէ գարըլուպ պէնիմ կիպի ալտանասընըզ:

Գ. Փ.

# ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

**ՂԱԼԱԹԻԱ.** — «Հանրագիտակ» հրատարակչը շուտ շուտ յառաջ կերթայ, «Ծաղիկ» դանդաղաբայլ ետ ետ կերթայ, ու նախանձը մոլորական ապու կը պոռայ:

**Ծ. Խ.** — «Հանրագիտակ» խմբագրութիւնն ալ համակիր ընթերցողներու հետ քա՛հ, քա՛հ, քա՛հ կը խնդայ:

**ԳԱՏԸ-ԳԻԻՂ.** — Տիւրքիս քարոզիչ հայր սուրբը իր սենեակը հովհարող միակ պատուհանը, որ մօտիկը գտնուած եկեղեցւոյ սեպհական վարձու տըրուած տան մը վրայ կը նայի, ներկեւ պարտաւորուեցաւ, իր անբասիր վարքին նախանձախնդրութեանը մէկ նոր ապացոյցը տալու համար:

**Ծ. Խ.** — Իմացանք միանգամայն թէ թաղեցիները առաջարկեր են Թաղ. Խորհուրդին, կամ տունը վար առնել և կամ տարբեր կերպով մը շահագործել այդ տունը: Ըստ մեզ, միայն տունը վար առնելը բաւական չէ, պէտք է կիներուն երեսին միանգամ ընդ միշտ գոցել եկեղեցիին դուռները որպէս զի վարդապետին անբասիր վարքին նախանձախնդրութիւնը գոհացում գըտնէ: Երջանի՛կ Գատը-գիւղցիներ՛ը, որ այսպիսի անբասիր վարքին նախանձախնդրութիւնը պահող, պահպանող վարդապետի մը տիրացեր են:

**ԵՆԻ-ԳԱԲՈՒ.** — Մարիկ տուտու իր մէկ հատիկ զաւկին ամէն դիւրութիւն . . . տուած է ֆէյֆին ուզածը ընելու համար, պայմանաւ որ չամուսնանայ, որպէս զի իր հանգստութիւնն ալ չ'խանգարի:

**Ծ. Խ.** — Աղէկ խորհեր ես մարիկս, եթէ ինը ամիս վերջ պէպէք մը չտան ձեռքդ:

## ՎԱՀԱՆ ԷՖԷՆՏԻ ՓԱՓԱԶԵԱՆ

Ծանօթ զաւեշտագիր և մեր յարգելի բարեկամ Վահան Էֆ. Փափազեան, որուն սրամիտ յօդուածները այնքան հետաքրքրանք կը կարդացուին, խմբագրութեանս առաջարկութեան համաձայն, խոստացած է շարունակել իր աշխատակցութիւնը «Հանրագիտակ»:

Վահան Էֆ. Փափազեան, ըստ առաջնոյն «Հանրագիտակ» ամէն թիւի մէջ պիտի ունենայ իր յօդուածը:

Ուրեմն ՅԱԶՈՐԻ ԹԻՒՈՎ

## ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Ստացանք Ժազ Սայպալեանի (Փայլակ) «Առաջին սէր» ընտանի վիպակը որ լոյս տեսած է գեղարուեստական տպագրութեամբ, հանրածանօթ Տէր-Ներսէսեան յարգելի եղբարց տպարանէն: Գին 4 դր:

=====

Թագւոր Էֆ. Ջէրշեան Պանտրմա: «Հանրագիտակ» տեղւոյդ գործակալութիւնը շարունակել յանձն առած ըլլայնուդ համար մեր շնորհակալութիւնները:

ՕՔ ՆՈՔ

ԼՈՒՔ ՆՈՔ

ՈՏԱՆԱԿՈՔ

«Մանգունմեան հանեց թիւ մը քացառիկ  
Ուրիկ դուք անշուշտ անկասկած առիք,  
Եւ ուր գրիչներ սոխակ, ֆանարիկ  
Յօդուածներ ունին վրսեւ, անառիկ:  
Ո՛վ մարդ կարդա՛, եւ գրական համա՛ն  
Այս քերք՝ որուն սկը նպաստի համար  
Հիւանդանոցին, ուր կան խենդ, խելօք,  
Անձնութիւնքս հոն կը ծախէ լոկ:  
Արդ խօսքս կ'ուղղեմ ձեզ, Թօշիկ Վահան,  
Ձեզ, որ հիացնեք գիտունն ու խախան,  
Ձեր այդ նուէրով «յանգերու կուտակ»  
Հաւատացե՛ք որ առիթ մ'ի՛նձ կուտակ,  
Գովելով, հարցնել չեմ ըսեր կասակ,  
Թէ այդ «ՏԱԿ» երուն արդեօք չկա՞յ սակ:

X

Վարպէտ pianiste Մերձան Անթուն  
Ձոր ֆաջ կը ճանչնանք անհնձ, ես, դու, ան,  
Չօն Գարապէտեանց տիկինն առ Մառի  
Որուն մասնէրուն շաւ կը յարմարի,  
Շինեց պարերդ մը, անուն la brunette  
Ձոր անշուշտ պակաս չես ըներ տունդ:  
Պիտի տեսնես թէ հաճոյք այդ որքա՛ն  
Այս հեշտ, brillante polka mazurka:

X

Մե՛նք ժամանակին գրեցիք արդե՛ն  
Թէ շուտ կ'ազատի քաղաքի կարթն  
Սա Զղարտեան Վ. ը Մկրտիչ  
Որ հաւատացե՛ք եւ մարդ մը կտրի՛ն:  
Ինչե՛ր աչ չըսին սա մարդուն համար  
Յանգաւոր ըսող, պնդողներ յամառ:  
Բայց ահա այսօր դատով կորովի  
Անպատի կ'արձակուի մարդն այս գորովի:  
Պիտի՛ ուտե՛ք անշուշտ խաղաղ, մեկ ոսկին,  
Ականջ չսալով թերթերու խօսքին:

X

Դուն աչ դպրապէտ Գրիգոր Մեհեք  
Ձեռներդ քացիւր եւ ըսիր «է՛հ, սէր»,  
Ես աչ եռաձայն ֆեզի կաղաչեմ,  
Տե՛ս խուսքս, այսօր թեպէ՛ք կաղանձեմ

Բայց հոգ չէ վաղը կ'ըլլայ ճեպընթաց,  
Ուստի եւ արա՛ իմ աչ ճեպընթաց:  
Բայց աւաղ դեմքդ չեղաւ մեկե՛նս,  
Սակայն հոգ մ'ընէր չըլլար մեկե՛ն սա:  
Երբ եռաձայնի ֆու այդ գոռ խընթակ  
Յառաջդիմելու ըլլայ չորս սրնթակ,  
Նայե՛ այն ասե՛ն ինչպէս կը քափին  
Ոյժ տալով գործիդ, ջանքերուդ քափին:

X

Տեղադով խոշոր կարկուտ սովալի  
Արմաշու մօտիկ, գիւղին հասկալի  
Փնայե՛ք ամբողջ ծառերն ու արեւը,  
Ասով կարկուտ մեծ վրնաս առքեր:  
Արդ վանահայր Թորգոմ Վ. Գուշակ,  
Գրիչով նամակ, լեզուով մ'անուշակ,  
Կը խնդրէ որ մեր Պատրիարքարան  
Շուտով հասցընէ նըպաստի վարան:

X

Տիրացուական այսչափ նիւթ հերիք,  
Հիմա տեսնենք թէ, կենիկ կամ երիկ  
Որն ըլլայ հոգ չէ, նիւթ կը հայրաքե՛ն,  
Որ քաժին առնեն գրչիս «այ» խայրեն:  
Հաս մ'ահա գրայ: Գարապիք անշուշտ  
Օրիորդ մը որուն գրաւոր hanche ուշդ,  
Դարձող ձի նստէր ֆիջ մ'որ խնդայ նա,  
Բայց աւաղ այդ ձիւն շատ շուտ կ'ընթանայ,  
Այնպէս որ օրիորդն, ետուն տարիով,  
Կ'իջնայ եւ մարդուն ճիշտ կը մարի ֆով:  
Երբոր կը դադրի դարձող մեքենան,  
Իսկոյն կը վերցնեն մեղմիկ մեկե՛ն ան:  
Երեսէն հիւնդ, վեց սկըրթով կ'առնէ,  
Յանգաւոր կ'ըսեն դարձող առն է:

X

Գրիչըս թեպէ՛ք չէ յանգի ասակ  
Բայց իբր դաս մը, surprise քաղաքակ,  
Այս տաղ կը ձօնեմ Վահանին Թօշիկ  
Խրատելով որ վեր չեղի ֆան զօշիկ:

Բերա

ԳՐ. ՀԱՄԱԲԻԿԵԱՆ

Արտօնատէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտեսի, քիւ 52



# BOVININE

## ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴԻ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անդային մասերն եղան մին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆորէններն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ։ Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, գնահատուած համաբաւոր բժիշկներէն. շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անխորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անխորժութիւն»։ Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, օսմանեան նամակատան ետեւի կողմը։ Կը գտնուի նաեւ ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից մթերանոցներու քով։

50—43

### ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵՆՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց  
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

### Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան խան  
Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց բեղուններու և տղայոց չիք և դիմացկուն փափուներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Օսկարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է։  
Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին։

50—37

### ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ վնասա-

կար նիւթերէ բոլորովին զերծ է։

Յիշեալ ջուրը մազերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք ե-



ղած հրահանգները տրուած են, ասկէ զատ Ճերիտեի վեգաիի Թըպպիէի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են։

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառուջիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն։

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մազերը, զգուշացէք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը ստանալու համար դիմեցէք Մահմուտ բաշա ճատտէսի, իշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, որ պիտի զըտէք մաքուր ջուր ձեր մազերուն գունաւորման համար։

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Սօղանճեան ստորագրութեան։

# Հ Է Ր Ճ Ա Յ Ի

## Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօղի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջաւերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկունքեր, նաեւ ճերմակեղէններ, ֆանթեզիներ և թօափէններ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամֆօններ ու պիսիկլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

### Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաքաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50—28

Շաքաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։

## ԱՐԲԱՆԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ

Ի Զ Մ Ի Տ

Կը ստանան

Հրդեհի և ծովային ապահովագրութիւններ՝ չահաւէտ պայմաններով։

Ամէն տեսակ գօմիսիօնի գործեր, ներածում, արտածում և մաքսային գործողութիւններ։

Եւրոպական առաջնակարգ գործարաններու միջոցաւ՝ գունաւոր և պարզ պատկերազարդ քառթ-բութակներու պատրաստութիւն, ֆօնօկրաֆի համեմատ։

Կը հայրապրէ

«Թումաս Սքիտմոր» Անգլ. Տան գըրամարկդներէն։

Սաքսոնիոյ առաջնակարգ թիւնօներ՝ շաքաթական վճարումներով։

Ամենավերջին դրութեամբ պիսիքլէթներ։

Ամէն տեսակ երկրագործական և թիթեղագործի մեքենաներ։

Ուղղուած քանակութեամբ և տեսակով ընտիր և հոտաւէտ թէյեր։

Գաւառային յանձնարարութիւններ փութով կը հատարուին։

Հասցէ՝

ԱՐԲԱՆԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ, Իզմիտ